

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՄՄԾ ԳՀԾԶԲ-21/16-2»**

ք. Երևան

«29» 11 2021 թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման որջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:



2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **ընդհանուր առավելագույն գինը** կազմում է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ ըստ փաստացի մատուցած ծառայության՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով, համաձայնագրով հաստատված վճարման ժամանակացույցով սահմանված պայմաններով:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V = U \cdot K$ , որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է. **(10756800 տաս միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր)**

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

Միասնական սոցիալական ծառայություն  
ք. Երևան Նալբանդյան 13  
ՀՎՀՀ 02505511  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011556355



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Ռուփինյանց փ. 31.  
«Արարատրանկ» ԲԲԸ  
Հ/Հ 1510012745550100  
ՀՎՀՀ 00873228  
ՀՆՈ. 055465456



տնօրեն՝ Ա. Գասպարյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.

Հավելված N 1  
2021 թ. կնքված  
« 29 » 11  
« ՄՄԾ ԳՀԾՁԲ-2/1/16-2 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

		ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ					Մատուցման	
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱՆ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*	
1	50111130/513	<p>4 հատ Renault Logan (բոլորն էլ արտարված են 2015 թ-ին) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով:</p> <p>Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ որանսպորտային միջոցը Կատարողի տեխնիկական կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասների փոխարինման ծառայությունների դեպքում և երկու աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասների փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: Ծառայությունը մատուցվում է թերությունների ակտի ներկայացումից հետո՝ պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:</p>	Դրամ	600000	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև՝ «20» դեկտեմբեր 2021թ. ներառյալ**	

\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունները ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում:

h/h	SU-1 (տեխնիկական գնման / շրջանառության) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի,	Ss Названия TS-1 (техническая / диагностическая) TS-2 (ремонт), услуги и запасные части, смазочные материалы и другие вспомогательные материалы,	Չափաբաժին 1 / CPV-50111130/513/
-----	--	--	---------------------------------

<p>բալայտուրերի և այլ օժանդակ էլեմենտների անվանումները</p>	<p>используемые в транспортных средствах TS-2</p>	<p>Renault Logan (արտադրված 2015 թ-ին)</p>	
<p>1</p>	<p>2</p>	<p>3</p>	
<p>SU-1 ներառվող ծառայությունների անվանումները</p>	<p>Նախնական անվանումները</p>	<p>4</p>	
1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	5000
2	Սառեցման համակարգի ստուգում	Проверка системы охлаждения	5000
3	Յուղման համակարգի ստուգում	Проверьте масляную систему	5000
4	Արտացման համակարգի ստուգում	Проверка выхлопной системы	5000
5	Կցորդման համակարգի ստուգում	Проверка системы сцепления	5000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка коробки передач	5000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка автоматической коробки передач	5000
8	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	5000
9	Սառեցման համակարգի ստուգում	Проверка системы охлаждения	5000
10	Յուղման համակարգի ստուգում	Проверьте масляную систему	5000
11	Արտացման համակարգի ստուգում	Проверка выхлопной системы	5000
12	Կցորդման համակարգի ստուգում	Проверка системы сцепления	5000
13	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы коробки передач	5000
14	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы автоматической коробки передач	5000
15	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	Проверка перевода карты	5000
16	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	Проверка работы распределительная коробки	5000
	<p>SU-2 ներառվող ծառայությունների անվանումները</p>	<p>Նախնական անվանումները</p>	
	<p>1. Շարժիչ</p>	<p>1. Двигатель</p>	

1	Շարժիչի համուժ և տեղադրում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	80000
2	Շարժիչի քանարում արտադրում և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	120000
3	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	180000
4	Շարժիչի գլխիկի համուժ տեղադրում միջադիրի փոխարինումով	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	70000
5	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	60000
6	Շարժիչի գլխիկի փակված-ների փոխարինում հղկումով և խտարումներով 1 կ-տ	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	50000
7	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	25000
8	Շարժիչի փակվածների զսպանակների փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	30000
9	Փակվածների խցուկների փոխարինում 1 կ-տ	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	50000
10	Հրիչների կամ հիդրո-հրիչների փոխարինում 1 կ-տ	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	40000
11	Շարժիչի մխցաօղորի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	120000
12	Ծնկված և լիքերի հղկում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	250000
13	Ծնկված և լիքերի համուժ տեղադրում կամ փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	100000
14	Ծնկված և լիքերի ներդրակների փոխարինում 1 կ-տ	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	80000
15	Ծնկված և լիքերի ատամնանիվի փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	25000
16	Ծնկված և լիքերի ուղղում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	50000
17	Ծնկված և լիքերի առջևի խցուկի փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	30000
18	Ծնկված և լիքերի հետևի խցուկի փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	60000
19	Շարժիչի բլոկի փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	120000
20	Շարժիչի գլխիկի փոխարինում (ուղղում)	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	65000
21	Մխցի փոխարինում 1 հատ	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	40000
22	Բաշխիչ լիքերի համուժ և տեղադրում կամ փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	25000
23	Բաշխիչ լիքերի ակառցների համուժ և տեղադրում կամ փոխարինում	Տրված և ստանդարտացված և հավաքում	Տրված և ստանդարտացված և հավաքում	40000

24	Բաշխիչ լիսեռի խտարակի փոխարինում	Замена рычага распределительного вала	15000
25	Փոկանիվի փոխարինում	Замена шкива	20000
26	Շարժիչի առանձնավոր փոկի փոխարինում	Замена зубчатого ремень двигателя	30000
27	Շարժիչի շղթայի փոխարինում	Замена цепи двигателя	60000
28	Շարժիչի կարտերի նորոգում (եռակցում)	Ремонт сварочных работ двигателя (сварка)	15000
29	Շարժիչի կարտերի միջարկի փոխարինում	Замена подушки сиденья двигателя	15000
30	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	Удаление карт двигателя, установка с очисткой	15000
31	Շարժիչի յուղի մոխի փոխարինում	Моторное масло Замена двигателя	70000
32	Շարժիչի յուղի մոխի նորոգում, մաքրում	Ремонт, очистка масляного насоса двигателя	50000
33	Շարժիչի յուղի մոխի մաքրում	Очистка масляного насоса двигателя	25000
34	Յուղի ծորակի փոխարինում	Замена масляного крана	20000
35	Օդաբաշակ փողրակի փոխարինում	Замена труби выхложки	10000
36	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена крышки распределительного вала	15000
37	Շարժիչի կափարիչի միջարկի փոխարինում	Замена вставки крышки двигателя	15000
38	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена ротанга	50000
39	Շարժիչի կափարի փոխարինում	Замена клапана двигателя	15000
40	Շարժիչի կափարի միջարկի փոխարինում	Замена вставки клапана двигателя	15000
41	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	Замена шатуна двигателя 1 шт	55000
42	Մխցային օդակների փոխարինում 1 կ-տ	замена цилиндров 1 кт	80000
43	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	Замена приводного вала двигателя	25000
44	Առանձնավի փոխարինում	Замена зубчатого колесо	20000
45	Առանձնավի փոկի փոխարինում	Замена зубчатого ремnya	30000
46	Առանձնավոր փոկի պատյանի փոխարինում	Замена корпуса зубчатого ремnya я	5000
47	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	Замена сухарика 1 к / т	10000
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	Замена редуктора двигателя	50000
49	Շարժիչի փոկի հուրվակի փոխարինում	Замена сцепления сальника двигателя	35000

50	Շարժիչի հողովակի արանքրակի փոխարինում	Замена подшипника прицепа двигателя	35000
51	Շարժիչի արջևի կախարչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիր փոխարինումով	Замена передней крышки двигателя, снятие, установка путем замены сиденья	60000
52	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Բցտ) իրանի փոխարինում	Замена датчика моторного масла (кГц)	10000
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	Замена сальника двигателя	15000
54	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	Ремонт сальника двигателя	20000
55	Շարժիչի գանձանեղի փոխարինում	Замена шпильки двигателя	15000
56	Շարժիչի գանձանեղի փոխարինում բնիկ նորոգումով	Замена корпуса двигателя с ремонтом слота	10000
57	Գլխիկի հեղույսի փոխարինում	Замена винтов головки	2000
58	Ծնկածև լիսերի հեղույսի փոխարինում	Замена вала двигателя с ремонтом паза	20000
59	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	Установка электрооборудования двигателя	25000
60	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	Снятие и установка системы подачи топлива в двигатель	25000
	<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>	<b>2. Система рулевого управления, подачи и смазки</b>	
61	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	2000
62	Ավտոմեքենայի յուղում	В машинном масле	1000
63	Համակարգային ակտորոշում, թերությունների վերացմամբ	Компьютерная диагностика с устранением дефектов	6000
64	Յուղի ռադիատորի փոխարինում	Замена масляного радиатора	15000
65	Յուղի ռադիատորի նորոգում	Ремонт масляного радиатора	20000
66	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	Замена коллектора двигателя	20000
67	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	Замена коллектора двигателя	20000
68	Վառքցի մոմի փոխարինում 1 կ-տ	Замена свечи зажигания, 1 кт	16000
69	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	Замена мягкого фильтра топливного фильтра	15000
70	Օդի գտիչի փոխարինում	Замена воздушного фильтра	2000
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена расходомера воздуха	10000
72	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга воздушного фильтра	10000

73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	Замена масла в двигателе	15000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	Очистка инжекторных дымоходов	25000
75	Բոցամուղի կտրվաբրում	Кодирование зажигания	10000
76	Ինժեկտորի բոցամուղի ստաբուկերի փոխարինում	Замена жидкотопливных котлов	10000
77	Բենզամուղիչի փոխարինում	Замена бензинового двигателя	20000
78	Վառելիքի կոշտ մաքրման գոլիչի փոխարինում	Замена топливного фильтра жесткой очистки	10000
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена топлипровода	10000
80	Բռնկման կարգավորում	Настройка зажигания	5000
81	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена блока управления	15000
82	Ղեկավարման բլոկի վերանորոգում	Ремонт блока управления	100000
83	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка топливного бака, а также замена	50000
84	Վառելիքի բաքի մաքրում	Очистка топливного бака	50000
85	Օդի ծախսի սովիչի փոխարինում	Замена датчика расхода воздуха	15000
86	Հրի ջերմաստիճանի սովիչի փոխարինում	Замена датчика температуры воды	20000
87	Հրի խողովակի, փողրակի փոխարինում	Замена водопровода, шланга	15000
88	Բենզոբաքի բենզոմուղիչի ցանցի փոխարինում	Замена бензинового бензинового двигателя	10000
89	Բենզոբաքի բենզոմուղիչի ցանցի մաքրում	Очистка бензобаковой цепи бензинового двигателя	10000
90	Յուղի ճնշման սովիչի փոխարինում	Замена датчика давления масла	15000
91	Տվիչի փոխարինում	Замена датчика	10000
	3. Սառեցման և արտածման համակարգ	3. Система охлаждения и выпуска	
92	Հովիարի փոխարինում	Замена вентилятора	10000
93	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка уплотнения вентилятора или установка или замена	15000
94	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка радиатора или замена	12000
95	Ռադիատորի նորոգում	Ремонт радиатора	55000
96	Շերտափեղկի փոխարինում	Замена жалюзи	10000

97	Շերտափեղկի կառավարման ձգանդի փոխարինում	Замена ползунка управления подъемником	10000
98	Ընդարձակող բաքի փոխարինում	Замена расширительного бачка	15000
99	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	Замена шланга расширительного бачка	10000
100	Ջրիծորակի փոխարինում	Замена водопроводного крана	25000
101	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	Замена резинового шланга для системы охлаждения	5000
102	Հովարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена двигателя вентилятора	15000
103	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	Замена радиатора печи, все работы включены	50000
104	Վառարանի ռադիատորի նորոգում	Ремонт радиатора отопления	55000
105	Վառարանի շարժիչի փոխարինում	Замена двигателя духовки	35000
106	Թերմոստատի փոխարինում	Замена термостата	18000
107	Ջրի միջի փոխարինում միջադիրով	Замена водяного насоса с колодкой	50000
108	Ջրի միջի միջադիրի փոխարինում	Замена водяного насоса	50000
109	Գեներատորի փոկի փոխարինում	Замена уплотнения генератора	15000
110	Գեներատորի փոկի ձգող հուլովակի փոխարինում	Замена натяжного трейлера уплотнения генератора	15000
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	Ремонт водяных радиаторов	55000
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	Замена подушки термостата	15000
113	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и замена или замена глушителя	18000
114	Խլարարի 1 հատիտողվակիփոխարինում	Замена 1 трубного цилиндра	10000
115	Խլարարի անուրի (խալտ) փոխարինում	Замена глушителя (хамут)	5000
116	Խլարարի ներդիրի փոխարինում	Замена вкладки глушителя	5000
117	Խլարարի կախոցի փոխարինում	Замена подвески глушителя	5000
118	Հովացման հեղուկի փոխարինում	Замена охлаждающей жидкости	3000
	<b>4. Կցորդում և ՓՏ</b>	<b>4. Приложение и передача</b>	
119	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	Снятие и установка конвертера АКП	50,000
120	ԱՓՏ-ի տանող սկավախափի փոխարինում	Замена дискаведущего к АКП	50,000



